



ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
ավագ հետազոտող, տնտեսագիտության թեկնածու

ԳԱՍՏՐՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գաստրոզբոսաշրջությունը՝ Հայաստանում ունի վաղեմի ավանդույթներ, զարգացման մեջ ներուժ և հեռանկարներ: 250 ներգնա գրոսաշրջիկներից մեր հարցումների արդյունքները վկայում են, որ նրանք շատ գոհ են հայկական խոհանոցի ու հյուրներակալությունից:

Գաստրոզբոսաշրջության զարգացումը կիրանի հայկական խոհանոցի և ավանդույթների վերագնահատումը, տարածաշրջանային համաշափ զարգացումը, ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

Հողվածում կատարվել են մի շարք առաջարկություններ՝ ՀՀ գաստրոնոմիական բրենդի ստեղծման և գաստրոզբոսաշրջության առաջնորդման ու զարգացման ուղղությամբ, ինչպես նաև մշակվել է Հայաստանի և Արցախի գաստրոնոմիական քարտեզ, որը կարող է օգտագործվել որպես գրոսաշրջային մարքեթինգի բաղադրիչ:

Հիմնաբառեր. գաստրոզբոսաշրջություն, գաստրոզբոսաշրջիկ, գուրման, գաստրոնոմիական բրենդ, ազգային խոհանոց, հյուրներակալություն, գաստրովառատոն, գաստրոքարտեզ

JEL: L83, O14, Z10

Բովանդակություն: Ներկայում գաստրոզբոսաշրջությունը համարվում է գրոսաշրջության արագ զարգացող տեսակներից մեկը: Տարեցտարի մեծանում է այն երկրների թիվը, որտեղ կամ գաստրոնոմիական երթուղիներ: Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության՝ գաստրոզբոսաշրջության ոլորտի տարեկան աճը կազմում է 7-12%:

Գաստրոզբոսաշրջիկի համար ավանդական խոհանոցը մշակույթի մաս է կազմում և ընկալվում է պատմության, կրոնի, տնտեսության, սովորույթների, ավանդույթների, լեզենդների և այլ գործոնների հետ, որոնք կազմում են երկրի կամ տարածաշրջանի յուրահատկությունը:

Գաստրոնոմիան կարևոր նշանակություն ունի գրոսաշրջային դեստինացիայի համար: Շատ դեպքերում գրոսաշրջիկներն ընտրում են այն դեստինացիաները, որոնց գաստրոնոմիան մեծ խռակ ունի: Բացի դրանից, գաստրոնոմիան կարևոր գործոն է տվյալ դեստինացիայից դրական տպավորություն ստանալու հարցում: Համադամ խոհանոցը մեծ ազդեցություն է ունենում գրոսաշրջիկների ընկալումների և գրիունակության աստիճանի վրա:

Հողվածում ներկայացվել են գաստրոգրոսաշրջության էլույթունը, առանձնահատկությունները, ՀՀ գաստրոնոմիական ավանդույթները, որոնք կարող են հիմք հանդիսանալ գրոսաշրջության այս տեսակի զարգացման համար: Վերլուծվել են գաստրոգրոսաշրջության առկա վիճակը, զարգացման նախադրյալները և հնարավորությունները Հայաստանում:

Գրականության ակնարկ: Սույն հատվածում համառոտ կանդրադառնքը գաստրոգրոսաշրջության, գաստրոգրոսաշրջիկների մասին գրականության մեջ առկա հիմնական մոտեցումներին, ինչպես նաև ՀՀ գաստրոնոմիական ավանդույթներին:

Գաստրոնոմիա բառն առաջացել է հունարեն *gastros* – ստամոքս և *nomos* – գիտելիք, իրավունք բառերից, ներ իմաստով ընկալվում է որպես լավագույն ուտելիքի վայելում, իսկ լայն իմաստով՝ սննդի հետ կապված ամեն ինչ՝ արտադրություն, սպառում, ընտրություն, հաճախորդների ավանդույթներ և այլն¹: Բրիտանական հանրագիտարանը գաստրոնոմիան ներկայացնում է որպես լավագույն սննդի ընտրության, պատրաստման, մատուցման և վայելելու արվեստ²:

Գաստրոգրոսաշրջությունը կարելի է բնորոշել որպես *Ճանապարհորդություն*, որի նպատակն է ծանոթանալ այլ երկրի ազգային խոհանոցի, սննդի պատրաստման առանձնահատկություններին, ծերք բերել անկրկնելի ու հիշարժան գաստրոնոմիական փորձառություն³.

Գաստրոգրոսաշրջիկները բնակչության հետևյալ հատվածն են ներկայացնում՝ գրոսաշրջիկներ, որոնք հոգնել են սովորական տուրերից և ցանկանում են նոր բան փորձել, գուրմաններ (համադամասեր, յուրահատուկ ուտելիքի և խմիչքի գիտակ, գնահատող ու սիրող), գրոսաշրջիկներ, որոնց աշխատանքը կապված է սննդի պատրաստման և ընդունման հետ, սննդի փորձագետներ, գրոսաշրջային գործակալությունների ներկայացուցիչներ, որոնք հետաքրքրված են սեփական գաստրոսուրերի կազմակերպմանը⁴:

2003 թ. Երիկ Վուլֆը հիմնեց Խոհարարական գրոսաշրջության միջազգային ասոցիացիան (*The International Culinary Tourism Association*): 2012 թ. այն ռեբրենդինգ արվեց Մանդի գրոսաշրջության համաշխարհային ասոցիացիայի (*World Food Travel Association*), որն այսօր աշխարհի 139 երկրում ունի 50.000 մասնագետից բաղկացած համայնք: Ըստ Վերջինիս տվյալների՝ գրոսաշրջիկների 93%-ն ընդգրկվել է գաստրոնոմիկ փորձառության մեջ:

¹ Տես Scarpatto R., Gastronomy as a Tourist Product: the Perspective of Gastronomy Studies, Tourism and Gastronomy, էջ 52, http://thesispublication.com/wp-content/uploads/Greg_Richards_Tourism_and_Gastronomy_Routledge_BookFi.pdf:

² Տես Richards G., Gastronomy: an Essential Ingredient in Tourism, Production and Consumption?, Tourism and Gastronomy, էջ 3, http://thesispublication.com/wp-content/uploads/Greg_Richards_Tourism_and_Gastronomy_Routledge_BookFi.pdf:

³ Տես Wolf E., Culinary Tourism: A Tasty Economic Proposition. Portland, Oregon: International Culinary Tourism Association, 2002:

⁴ Տես Shenoy S.S., Food Tourism and the Culinary Tourist. A Thesis Presented to the Graduate School of Clemson University, (Doctoral dissertation), 2005:

Բայց դրանից, սանդի վրա կատարված ծախսերը կազմում են գրոսաշրջային ծախսերի 15-35%-ը՝ կախված այցելության վայրից⁵: Գաստրոնոմիական գրոսաշրջության մասին Ձբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գեկույցում 2017 թ. հրապարակվել են անդամ կազմակերպությունների հետազոտության արդյունքները: Հարցվածների 87%-ը գաստրոնոմիան ռազմավարական տարր է հաճարում տարածաշրջանի բրենդի և իմիջի մշակման գործում: Հարցվածների 70%-ը կարծում է, որ իրենք գաստրոգրոսաշրջիկներին արդեն թիրախավորել են որպես շուկայական սեզմենտ, թեև նրանցից միայն 10%-ն է կարծում, որ իրենց դեստինացիայում գաստրոգրոսաշրջությունը բավականաչափ առաջնորդ ունի⁶:

Հայաստանի խոհարարական ավանդույթները սկիզբ են առնում պատմության խորքից, ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են տարբեր պատմական, աշխարհագրական, կլիմայական գործոններով: Հայկական խոհանոցը իր վրա կրում է դեռևս Կանի թագավորության (մ.թ.ա. 9-6 դար) աշխարհագրակլիմայական և հասարակարգային գործոնների ազդեցությունը: Այդ ժամանակ Հայաստանի տարածքում ապրող բնակչությունը գրավում էր գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և գյուղատնտեսական մթերքներից պատրաստի սննդանյութեր վերամշակելով: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են ծավալուն շտեմարաններ, հացահատիկով լեցուն կարաս-կծուճներ, գարեջուր և քաղցրածիկ պատրաստելու և պահելու հատուկ անորմներ: Հայտնաբերված հացահատիկային մթերքի մեծ քանակությունը վկայում է այն մասին, որ մեզանից ավելի քան 2,5 հազար տարի առաջ Կանի թագավորությունում աճեցնում էին մշակաբույերի, այդ թվում՝ մերկահատիկ ցորենի մի քանի տեսակներ, նաև մեծ քանակությամբ գարի: Լայնորեն տարածված էր գարեջուր պատրաստելը, ընդ որում՝ որպես հումք օգտագործում էին ոչ միայն գարին, այլ նաև կորեկը: Վանի թագավորությունում լայնորեն տարածված էին մանրասերմ ծիփրակլան և մանրահատիկ ոսապը: Մշակում էին նաև սիսեռ, ծիփրաբեր խաչածաղկավոր հացազգիներ: Չիփրաբեր բույսերից մշակում էին քունջութ, որը տալիս էր բարձրորակ ծեթ: Պեղումների ժամանակ զտնվել են ցորենի, սիսեռի և բունջութի տարբեր համադրություններ: Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները խոսում են խաղողագործության և գինեգործության զարգացման մասին: Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվեցին նաև գինու խոշոր մառաններ: Վանի բնակչությունը կենդանական մթերքներից օգտագործում էր ոչխարի, տավարի, այծի, խոզի, գոմեշի և ընտանի թրչունների միսը: Վանի թագավորությունում զարգացած էր նաև կարնատնտեսությունը: Հաստատված է, որ գորեք 2600 տարվա ընթացքում հայերի սննումը հիմնականում կազմված է եղել միկանոյն մթերքներից, որոնցից հիմնականներից մեկը լավաշ հացն է, որը թխում են թոնիրում: Հայերը խնորման և հացարթսման մասին պատկերացում են ունեցել դեռևս 2500 տարի առաջ⁷: Հայկական լավաշը 2014 թ. ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհա-

⁵ Stú World Food Travel Association, <https://www.worldfoodtravel.org/cpages/about>:

⁶ Stiu World Tourism Organization, Affiliate Members Report, Volume sixteen – Second Global Report on Gastronomy Tourism, UNWTO, Madrid, 2017, p. 17-18:

⁷ Report on Castro's Policy in Central America, UNRWA, Addendum, 2011, p. 11-12.

St'u Հայկական խոհանոց, <https://akunq.net/am/?p=191>; https://howlingpixel.com/i-hy/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AD%D5%B8%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%81, հատված Ա.Ս. Փիրլամանի և Լ.Բ. Հարությունյանի՝ 1963 թ. Երևանում հրատարակված «Հայկական խոհանոց» գրքի նախաբանից:

յին ժառանգության ցանկում: Հայկական հայտնի ճաշատեսակներից են հարիսան, մշոշը, տոլման, կողովակը, խաշը, խորովածը և այլն:

Մեթոդաբանություն: Հետազոտության նպատակն է վերլուծել գաստրո-գրոսաշրջության զարգացման հնարավորությունները ՀՀ-ում: Հետազոտության օբյեկտը ՀՀ գաստրոգրոսաշրջության ռլորտն է, առարկան՝ գաստրո-գրոսաշրջության զարգացման հիմնախնդիրների և հնարավորությունների վերլուծությունը:

Հետազոտությունում օգտագործվել են վերլուծության և համադրության, միկոռ- և մակրովերության, սղիդոնիկական հարցման մեթոդներ:

Վերլուծությունների արդյունքում կատարվել են գաստրոզբոսաշրջության զարգացմանն ուղղված մի շարք առաջարկություններ, ինչպես նաև մշակվել է ՀՀ գաստրոնոմիական բարտեզ:

Վեղուժություն և մեկնարանություններ: 2018 թ. Հայաստան է ժամանել 1651782 զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա համենատ աճելով 10,5%-ով, որոնցից 307473-ը (18,6%-ը) հանգրվանել է հյուրանոցային տնտեսության օբյեկտներում⁸: Նշենք, որ ներկայում չկա պաշտոնական վիճակագրություն այն մասին, թե որքան է ՀՀ ժամանած զաստրոզբոսաշրջիկների թվաքանակը: Քանի որ ընդգծված զաստրոտուրերի քանակությունը սահմանափակ է, այսինքն՝ զբոսաշրջիկները հիմնականում ընտրում են դասական փաթեթ, որի դեպքում կարող են նաև ծանոթանալ ազգային խոհանոցին, ապա կարող ենք ասել, որ Հայաստան ժամանած զբոսաշրջիկները մեծավ մասամբ փորձում են հայկական խոհանոցի ճաշատեսակները: Գաստրոտուրերի կազմակերպմանը է մասնագիտացած «Արևաքար Թթեվլ» կազմակերպությունը: Ընկերությունն ունի տարբեր փաթեթներ, տարբեր տևողությամբ, հիմնականում ներառված են համեստներ, վարդեսության դասեր, Արենի գինու բնօրդան այցելություն, Երևանյան գինու օրերին մասնակցություն, տարբեր ռեստորաններ այցելություն, նաև էքսկուրսիաներ և այլն⁹: Սրանից բացի, կան նաև այլ զբոսաշրջային կազմակերպություններ, որոնք առաջարկում են խոհանոցային և գինու տուրեր: Օրինակ, «Բարև Արմենիա»-ն¹⁰ ունի «Խոհանոցային տուր համեմ Հայաստան» 7-օրյա տուր, «Գինեգործության բնօրդան. գինետուր Հայաստանում» 8-օրյա տուր, մեկօրյա գինետուր Հայաստանում 10 ժամով, Explore Armenia-ն ունի գինու և կոնյակի տուրեր¹¹, One way tour-ն ունի 7-օրյա խոհանոցային տուր¹², Yan Voyage-ն ունի 7-օրյա տուր՝ «Հայկական խոհանոցի զարտնիքները»¹³ և այլն: Նշենք, որ այս տուրերը կազմակերպում են, եղանակով պատվերներ:

2017 թ. ՀՀ-ում հանրային սննդի օբյեկտների թիվը կազմել է 1663, որի շուրջ 68%-ը՝ Երևանում։ Գաստրոգրուսաշրջության զարգացման մեջ էական նշանակություն ունեն հենց հանրային սննդի օբյեկտները, որոնց ոչ միայն ճաշացանկը, այլ նաև սպասարկման նակարծնական ազդում է զբուսաշրջիկի գործունեության վրա։

⁸ Տես ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվարին, էջ 104, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf:

⁹ Страница Гастрономические туры в Армению, <http://arevakar-travel.com/cat.php?id=5>.

¹⁰ Տարբերակ թվով Երևան, <https://arrevarmen-travel.com/cat.php?id=3>;
Տստու լսնհանցային առողջեր Հայաստանում, https://barevarmenia.com/am/armenia_tours_activities/2/;

¹¹ Տ՛ս Գինու և կոնյակի տուրեր, <https://explorearmenia.am/hy/turer-hayastan.html>:

¹² Հայ գործադրություն, <https://explorearmenia.am/hy/turci-hayastan.html>.
Տե՛ս Խոհանոցային սուրբ Հյաստանում, <https://onewaytour.com/hy/incoming-tours/khohanotsayin-tur/>.

¹³ Տս Հայկական խոհանոցի գաղտնիքները, <http://yanvoyage.am/hy/the-secrets-of-the-armenian-cuisine/>:

հունակության աստիճանի վրա: Զբոսաշրջիկների և տեղացիների շրջանում մեծ ձանաչում ունի «Պանդոկ Երևանը»՝ որպես ազգային համել խոհանոց ունեցող ռեստորան: Վերջին ժամանակներու ռեստորանները նաև բնորոշ հայկական անվանումներով են՝ «Կոլոլակ», «Ծիրանի», «Դոլմանա», «Լավաշ», «Ծերեփ», «Չինար», «Չաման», «Գարա պանդոկ», «Բաստուրմա» և այլն, ինչը ևս հետաքրքրության է արժանանում:

Աղյուսակ 1

Հանրային սննդի կազմակերպման օբյեկտների քանակը և ծառայությունների ծավալը 2015-2017 թթ., ըստ <<մարզերի և Երևան քաղաքի

	2015 թ.		2016 թ.		2017 թ.	
	քանակը, միավոր	ծավալը, մմ դրամ	քանակը, միավոր	ծավալը, մմ դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն դրամ
ք.Երևան	1221	58832.3	1231	61511.2	1128	70638.9
Արագածոտն	22	348.4	22	270.1	23	373.2
Արարատ	90	420.6	89	389.9	96	581.3
Արմավիր	24	575.7	23	519.7	25	579.7
Գեղարքունիք	18	468.5	17	444.4	15	556.8
Լոռի	30	554.5	27	638.7	19	928.7
Կոտայք	103	4300.5	110	4549.9	98	6322.5
Շիրակ	71	1525.0	69	1161.4	72	1446.7
Սյունիք	52	697.1	43	533.3	53	578.6
Վայոց ձոր	35	345.5	43	448.7	44	553.0
Տավուշ	77	620.1	86	959.7	90	1049.1
Ընդամենը <<	1743	68688.2	1760	71427.0	1663	83608.5

<< Ժամանած զբոսաշրջիկների կարծիքը մեր ազգային խոհանոցի մասին իմանալու նպատակով կատարել ենք հարցում, որին մասնակցել է 250 ներզնա զբոսաշրջիկ (2018 թ. ընթացքում): Վերջիններս հիմնականում գոհ և շատ գոհ են եղել հայկական խոհանոցից, գների մակարդակից: Նրանք առավելապես հավանել են հայկական ավանդական կերակրատեսակները (լավաշը, խորովածը, տողման, հարիսան, գարան, գինին, կոնյակը և այլն), հայկական հյուրընկալության ավանդույթները:

Աղյուսակ 2

<< Ներզնա զբոսաշրջիկների կարծիքը հայկական խոհանոցի վերաբերյալ

	Հուրանոցային տնտեսության օբյեկտներում սննդի դրամ	Մրձարան-ներում և ռեստորան-ներում սպասարկման մակարդակը	Մրձարան-ներում և ռեստորան-ներում սննդի դրամ	Մրձարան-ներում և ռեստորան-ներում գների մակարդակը	Հայկական խոհանոցի յուրահասությունները	Ուստորաններում WiFi-ի առկայությունը և կապի դրամ
շատ դժգոհ	9	6	4	4	1	7
դժգոհ	16	19	18	16	18	16
միջին գոհումակալության	33	21	14	18	18	33
գոհ	72	87	62	73	83	84
շատ գոհ	97	112	141	132	124	98
կիրառելի չէ	9	1	5	-	5	-
չեն պատասխանել հարցին	14	4	6	7	1	12

2019 թ. սեպտեմբեր ամսվա տվյալներով Հայաստանում ոչ թանկարժեք ռեստորանում սննդի միջին արժեքը կազմել է 2500 դրամ, միջին մակարդակի

ռեստորանում 2 անձի համար նախատեսված սնունդը (3 մասից բաղկացած)` 12000 դրամ¹⁴:

Վերջին տարիներին Հայաստանում կազմակերպվող գաստրոփառատունները նպաստում են գաստրոգրոսաշրջության զարգացմանը: Զբոսաշրջիկներն առավել նախընտրում են գինու, խորվածի, տոլմայի փառատոնները:

Հայկական ավանդական կերակրատեսակների վերհանման և ճասսայականացման նպատակով 2007 թ. ստեղծվեց Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման ՀԿ-Ծ¹⁵, որը բանահավաքչություն է կազմակերպում ՀՀ մարզերում, Արցախում և Զավախիքում: Կազմակերպվում են նաև մրցույթներ, սեմինարներ, փառատոններ: Կազմակերպությունը ծերնամուսիս է եղել «Հայ ավանդական խոհանոց» համրագիտարանի ստեղծմանը:

2018 թ. նոյեմբերի 1-6-ը Հայաստանում «Արևաքար Թրեվիի» հիմնադրի կողմից կազմակերպվեց Yerevan Food Fest 2-րդ փառատոնը՝ նվիրված Երևանի հիմնադրման 2800 ամյակին: Փառատոնի ընթացքում Երևանի տարբեր ռեստորաններում և սրճարաններում հատուկ ճաշացանկեր (set menu) են կազմակերպվել հրավիրված և տեղական շեֆ-խոհարարների կողմից: Դրանից բացի, կազմակերպվել են հրավիրյալ մասնագետների դասախոսություններ, սննդի պատրաստման վարպետության դասեր, ցուցահանդեսներ, ինչպես նաև «Գաստրոտուրիզմը Հայաստանում» խորագրով համաժողով՝ հրավիրված փորձագետների, ռեստորանատերերի և հյուրանոցատերերի, ՀՀ գրոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների և մասնագետների մասնակցությամբ¹⁶:

Գաստրոգրոսաշրջությունը ՀՀ-ում զարգացման լուրջ նախադրյալներ ունի: Այն կարող է գրավել ինչպես ներգնա, այնպես էլ ներքին զբոսաշրջիկներին: Հայաստանի յուրաքանչյուր շրջան ունի իր ավանդական ճաշատեսակները, որոնցից ռեստորաններում առկա են հիմնականում առավել հայտնիները: Այնինչ, ինչ ու մոռացված, պակաս հայտնի կերակրատեսակները վերաբարձագնելը և դրանք ռեստորանային ճաշացանկերում ընդգրկելը չափազանց կարևոր է ինչպես ազգային խոհանոցի ավանդույթների պահպանման, այնպես էլ զբոսաշրջիկներին հետաքրքիր ու համեղ կերակուրներ առաջարկելու տեսանկյունից: Դրանք կարելի է օգտագործել նաև յուրաքանչյուր տարածաշրջանի համար գաստրոնոմիական բրենդ ստեղծելու նպատակով, ինչը կարող է դառնալ հայկական զբոսաշրջային արդյունաբերության զարգացման այցելքարտերից մեկը:

Գաստրոփառատուններ մշակելիս կարևոր է նաև թիրախային շուկան: Ելնելով ազգային սովորույթներից՝ որոշ զբոսաշրջիկների հետաքրքրում են ձկնային ուտեսաւոնները, մյուսներին՝ կարնամթերքը, խմիչքները և այլն:

Հայաստանը գաստրոգրոսաշրջության առաջնորդական համար լայնորեն պետք է օգտագործի հանացանցը և հատկապես սոցիալական ցանցերը, որոնցում գրավիչ նկարները կարծես փոխանցում են նաև համի ու հոտի

¹⁴ Տես Cost of Living in Armenia, https://www.numbeo.com/cost-of-living/country_result.jsp?country=Armenia:

¹⁵ Տես Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման ՀԿ, https://www.facebook.com/pg/ArmenianCookeryTDP/about/?ref=page_internal:

¹⁶ Տես Կոլինարնի պոտենցիալ Արմենի, բայց գործարքությամբ առաջնորդական համար լայնորեն պետք է օգտագործի հանացանցը և հատկապես սոցիալական ցանցերը, որոնցում գրավիչ նկարները կարծես փոխանցում են նաև համի ու հոտի

զգացողությունը՝ գրավելով զբոսաշրջիկներին: Տարածման մյուս ուղին տարբեր ցուցահանդեսներում տեղեկատվական նյութերի օգտագործումն է: Կարևոր է Հայաստանի ազգային խոհանոցի մասին տեղեկատվական զբոսաշրջային գրքով կների տպագրությունը, որոնք պետք է հասանելի լինեն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններում, ինչպես աշխարհի շատ երկրներում է: Ընդ որում, դրանք ներառում են տվյալներ ինչպես ազգային խոհանոցի, ճաշատեսակների, դրանց բաղադրատոմների, այնպես էլ հայտնի ռեստորանների, սննդի կետերի, սրճարանների մասին: Գաստրոզբոսաշրջության զարգացման համար խիստ անհրաժեշտ են պետական աջակցությունը ոլորտին և պետական-մասնավոր համագործակցությունը:

Հայաստանի և Արցախի հիմնական ազգային ավանդական կերակրատեսակները, որոնք կարող են օգտագործվել գաստրոնոմիական գրուաշրջային առաջարկ մշակելու համար, պատկերել ենք Հայաստանի և Արցախի քարտեզի վրա¹⁷, ինչը կարող է օգտագործվել որպես գրուաշրջային մարթեթինգի բաղադրիչ: Այս դեպքում գրուաշրջիկը տեսնում է, թե որ մարզում ինչ կարող է համտեսել (նկար 1):



Նկար 1. Հայաստանի և Արցախի գասարունոմիական քարտեզ (նշակել է հեղինակը)

¹⁷ Ազգային խոհանոցի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրել է Հայ խոհարարական ավանդույթից զարգացման և պահպանման ՀՀ-ի նախագահ, «Մեղրակ Մանուկյան» խոհառնական ստոլիհայի Ռեսպոնս Սեղման Մամուլուան:

Հայաստանի և Արցախի քաղաքացիության համար կազմակերպվել է կուսակցություն՝ կոչվելով «Հայություն»:

Իհարկե, մարզերի ազգային, ավանդական շատ կերակուրներ համատարած ձանաչում չունեն, կամ ոչ բոլոր ռեստորաններում կարելի է դրանք համտեսել, ուստի այս ուղղությամբ ևս աշխատանք պետք է կատարվի, և Հայաստանը կարող է դառնալ գաստրոգրոսաշրջության պահանջված ուղղություն:

Գաստրոֆարտեզի հիման վրա պետք է մշակվեն գաստրոգրոսաշրջային երթուղիներ: Բնականաբար, գաստրոքարտեզը հայկական խոհանոցը ավելի տեսանելի ու գրավիչ կղաքանի գրոսաշրջիկների համար, և այն պետք է կիրառել մարտերինգային միջոցառումների ժամանակ՝ գրոսաշրջիկներ ներգրավելու նպատակով: Գաստրոֆարտեզը պետք է ներառել ինչպես Հայաստանի, այնպես էլ հայկական խոհանոցի մասին գովազդային տեղեկատվական գրքույկներում՝ հակիրճ ներկայացնելով նաև կերակուրների բաղադրատոմսերը և հիմնական ռեստորանները, որտեղ կարելի է համտեսել դրանք:

Եզրակացություն և առաջարկություններ: Հոդվածի առանցքային վերլուծությունների հիման վրա ՀՀ-ում գաստրոգրոսաշրջության զարգացման համար կարող ենք մատնանշել հետևյալ հիմնական քայլերի անհրաժեշտությունը.

- յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ ազգային խոհանոցի վերագնահատում, գաստրոնոմիական բրենդի ստեղծում,
- գաստրոգրոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագրի մշակում,
- գաստրոգրոսաշրջության զարգացման մարքեթինգային միջոցառումներ (ՀՀ գաստրոնոմիայի մասին տեղեկատվական գրքեր, բուկլետներ տարբեր լեզուներով, կարճ և երկար տևողության հաղորդումների ցուցադրում տեղական և միջազգային մեջիայով՝ նաև աշխարհահրչակ հայերի մասնակցությամբ և այլն),
- տարբեր իրադարձությունների, միջոցառումների ժամանակ սննդի ներգրավում՝ ազգային խոհանոցի առաջմղման նպատակով,
- գաստրոգրոսաշրջության երթուղիների մշակում ըստ մարզերի՝ ներառելով տարբեր միջոցառումներ, մասնակցություն ցուցահանդեսների, փառատոնների, նաև գյուղատնտեսական, բնეրքահավաքի աշխատանքների, հացի թխման, սննդի պատրաստման այլ աշխատանքների, վարպետության դասերի,
- գրոսաշրջային դասական տուրի մեջ գաստրոգրոսաշրջության տարրերի ընդգրկում,
- նոր փառատոնների կազմակերպում,
- գաստրոգրոսաշրջության մասնագետների վերապատրաստում, բուհերում ներ մասնագետների պատրաստում, համապատասխան առարկաների ուսուցանում,
- գինու, կոնյակի, գարեջրի, խորովածի, հարիսայի, տոլմայի, լավաշի, պանրի, ծիրանի և այլ հայկական կերակրատեսակների և մթերքների գաստրոնոմիական բրենդի մշակում՝ դրանք վերածելով գրոսաշրջային պրոդուկտի,
- գաստրոգրոսաշրջության կրթական դասընթացների, համաժողովների, քննարկումների, կլոր սեղանների, գիտաժողովների կազմակերպում,

- գաստրոզբուսաշրջության վիճակագրական հաշվառման իրականացում,
 - ռեստորաններում սպասարկման մակարդակի բարձրացում,
 - գաստրոնոմիական հոլիչանվերների մշակում. զբոսաշրջիկները որպես հոլիչանվեր Հայաստանից կարող են տանել տեղական արտադրության գինի, կոնյակ, չիր, մուրաբա, պանիր և այլն,
 - Հայաստանի գաստրոզբուսաշրջային արդյունքի գլուխացում:

Գաստրոզոսաշրջությունը, լինելով գրոսաշրջության մի տեսակ, ևս օժտված է բազմարկիշ էֆեկտով, ունի տնտեսական, սոցիալական, մշակութային, բնապահպանական նշանակություն: Գաստրոզոսաշրջության զարգացումը կխթանի հայկական խոհանոցի և ավանդույթների վերագնահատումը, տնտեսական զարգացումը, ենթակառուցվածքների և տարածաշրջանային համաչափ զարգացումը և այլն:

Օգտագործված գրականություն

1. Խոհանոցային սոուր Հայաստանում, <https://onewaytour.com/hy/incoming-tours/khohanotsayin-tur/>:
 2. Գինու և կոնյակի սոուրեր, <https://explorearmenia.am/hy/turer-hayastan.html>:
 3. Խոհանոցային սոուրեր Հայաստանում, https://barevarmenia.com/armenia_tours/activities/2:
 4. Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման ՀԿ, https://www.facebook.com/pg/ArmenianCookeryTDP/about/?ref=page_internal:
 5. Հայկական խոհանոց, <https://akunq.net/am/?p=191>;
https://howlingpixel.com/i-hy/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AD%D5%B8%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%81:
 6. Հայկական խոհանոցի զալտսիբըները, <http://yanvoyage.am/hy/the-secrets-of-the-armenian-cuisine/>:
 7. «Հայաստանի վիճակը 2019 թ. հունվարին»,
https://www.armstat.am/file/article/sv_01_19a_421.pdf:
 8. Փիրուզյան Ա.Ս., Հարությունյան Լ.Բ., Հայկական խոհանոց, Եր., 1963:
 9. Гастрономические туры в Армению, <http://arevakar-travel.com/cat.php?id=5>.
 10. Кулинарный потенциал Армении, рай для гурманов и палитра гастротуризма на празднике вкуса Yerevan FoodFest (фото, видео), http://newsarmenia.am/news/analytcs/kulinarnyy-potentsial-armenii-ray-dlya-gurmanov-i-palitra-gastroturizma-na-prazdniike-vkusa-yerevan-f/?fbclid=IwAR1-LxqShMvWo-i0Su0E1IMzhczIPjaxjjJZTP_T1aQ1oM9eL4yVB-oVCHo.
 11. Cost of Living in Armenia, https://www.numbeo.com/cost-of-living/country_result.jsp?country=Armenia.
 12. Richards G., Gastronomy: an Essential Ingredient in Tourism, Production and Consumption?, Tourism and Gastronomy, http://thesispublication.com/wp-content/uploads/Greg_Richards_Tourism_and_Gastronomy_Routledge_BookFi.pdf.
 13. Scarpatto R., Gastronomy as a Tourist Product: the Perspective of Gastronomy Studies, Tourism and Gastronomy, http://thesispublication.com/wp-content/uploads/Greg_Richards_Tourism_and_Gastronomy_Routledge_BookFi.pdf.

14. Shenoy S.S., Food Tourism and the Culinary Tourist. A Thesis Presented to the Graduate School of Clemson University, (Doctoral dissertation), 2005.
15. Wolf E., Culinary tourism: A Tasty Economic Proposition. Portland, Oregon: International Culinary Tourism Association, 2002.
16. World Food Travel Association, <https://www.worldfoodtravel.org/cpages/about>.
17. World Tourism Organization, Affiliate Members Report, Volume 16, Second Global Report on Gastronomy Tourism, UNWTO, Madrid, 2017.

ГАЯНЕ ТОВМАСЯН

Старший исследователь исследовательского центра АГЭУ «Амберд»,
кандидат экономических наук

Перспективы развития гастротуризма в Армении.

Гастрономический туризм имеет давние традиции, потенциал и перспективы развития в Армении. Результаты нашего опроса среди 250 приезжих туристов показывают, что они очень довольны армянской кухней и гостеприимством. Развитие гастрономического туризма будет способствовать переоценке армянской кухни и традиций, региональному развитию, развитию инфраструктуры и т.д. Некоторые предложения были сделаны по поводу создания гастрономического бренда и развития гастрономического туризма в Армении, а также была разработана гастрономическая карта Армении и Арцаха, которая может быть использована в качестве компонента туристического маркетинга.

Ключевые слова: гастрономический туризм, гастро-турист, гурман, гастрономический бренд, национальная кухня, гостеприимство, гастрофестиваль, гастрономическая карта.

JEL: L83, O14, Z10

GAYANE TOVMASYAN

Senior Researcher at "Amberd" ASUE Research Center,
PhD in Economics

Prospects of Gastronomy Tourism Development in Armenia.

Gastronomy tourism has old traditions, development potential and prospects in Armenia. The results of our survey among 250 inbound tourists show that they are very satisfied with Armenian cuisine and hospitality. Gastronomy tourism development will promote the revaluation of Armenian cuisine and traditions, regional development, infrastructure development, etc. Some recommendations were made in the paper towards creating gastronomic brand and promoting gastronomy tourism in Armenia, besides a gastronomic map of Armenia and Artsakh was processed which may be used as a tool of tourism marketing.

Key words: gastronomy tourism, gastro tourist, gourmet, gastronomic brand, national cuisine, hospitality, gastrofestival, gastronomic map.

EL: L83, O14, Z10